ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Ավետիք Պետրոսյան, Եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության ԵՏՄ մաքսային քաղաքականության և օրենսդրական կարգավորման բաժնի ավագ մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ք. Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն), 2025թ. Մայիսի 5-ից 16-ը

3. Հրավիրող կողմ.

ԱՄՀ, Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի Տարածաշրջանային Հնարավորությունների Զարգացման Կենտրոն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

«Cohort Training Course on Macroeconomic Analysis and Management» թեմայով դասընթացը միտված էր մակրոտնտեսական անհավասարակշռությունների ախտորոշմանը և համակարգված քաղաքականությունների միջոցով դրանց ճշգրտմանը՝ անդրադառնալով տնտեսության տարբեր հատվածների միջև կապերին և փոխազդեցություններին:

5. Քննարկված թեմաները.

Դասընթացի շրջանակներում քննարկվել են հետևյալ թեմաները.

1. Մակրոտնտեսական կայունացման քաղաքականություն
2. Կառուցվածքային բարեփոխումներ
3. Դրամավարկային քաղաքականություն և փոխարժեքի ռեժիմներ
4. Փոխանցման մեխանիզմը այլընտրանքային փոխարժեքի ռեժիմներում
5. Թուրքիայի դեպքի ուսումնասիրություն՝ վերջին զարգացումները
6. Մատակարարման, պահանջարկի և աճի ախտորոշում
7. Իրական փոխարժեքի, գների մրցունակության և վճարային հաշվեկշռի վերլուծություն
8. Կապիտալի հոսքերի կառավարում

9. Հարկաբյուջետային քաղաքականության վերլուծություն և հարկաբյուջետային շրջանակներ
10. Հարկաբյուջետային կայունություն
11. Գնաճ և դրամավարկային քաղաքականություն
12. CAEM և QPM

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Դասընթացներին զուգահեռ անցկացվել են գործնական սեմինարներ ստացված գիտելիքները գործնականում կիրառելու նպատակով:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի ընթացքում որևէ որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այդպիսիք առկա չեն:

Ստորագրությունը, ամսաթիվը:

22 մայիս, 2025թ.